Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 20

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<24>> նոյեմբերի 2025թ. ք. Երևան

2025 թվականի նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում են հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ Մ. Հովհաննիսյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների

տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

5. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումների քննարկում:

Քննարկվեցին՝

1.1 «ՔԱՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 10.11.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00061 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ՔԱՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 10.11.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00061 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ լիցենզիայի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՔԱՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 «ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ՄՈԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 10.11.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00021 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ՄՈԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 10.11.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00021 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ լիցենզիայի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ՄՈԺ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ 19.11.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05269 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց անհատ ձեռնարկատեր ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ 19.11.2025թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05269 լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումներին կից նյութերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

Քննարկվեց՝ «ԱՎՏՈ ՏԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի նոյեմբերի 10-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի նոյեմբերի 10-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի 62 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈ ՏԵՍՏ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային

սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ «ՔԱՐ ՏԵԽ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի հոկտեմբերի 22-ի հայտը և հայտին կից փաստաթղթերը և նոյեմբերի 7-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ «ՔԱՐ ՏԵԽ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 22-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին՝ Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, ք. Սիսիան, Պ. Ադամյան փողոց 35/2 գործունեության վայրում: 2025 թվականի նոյեմբերի 7-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտին կից փոստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության գործունեության վայրում ուսումնասիրությունն իրականացվել է հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Պ. Գալստյանի կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՔԱՐ ՏԵԽ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

1) «ՔԱՐ ՏԵԽ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում:

5.1 Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ ՀՈՎԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ 04.11.2025թ. ներկայացված հայտը և հային կից փաստաթղթերը և նոյեմբերի 18-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ՝ ՀՈՎԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ 04.11.2025թ. ներկայացված հայտը և հային կից փաստաթղթերը և նոյեմբերի 18-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՀՈՎԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.2 Քննարկվեց՝ Ֆիզիկական անձ՝ ԱՐՄԵՆ ՍՈՒՐԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ 14.11.2025թ. հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ՝ ԱՐՄԵՆ ՍՈՒՐԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ 14.11.2025թ. հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերի:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՐՄԵՆ ՍՈՒՐԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան